ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 107 – Ա **14 մայիսի 2018 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 68-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.15-րդ կետերի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2009 թվականի հոկտեմբերի 30-ի «Մարզային հանձնաժողով ստեղծելու մասին» N 68-Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու համար անհրաժեշտ եզրակացություն տրամադրելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Բոթոյան Կ.	– ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, հանձնաժողովի նախագահ
Համբարձումյան Հ.	– մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Ղուրշուդյան Մ.	– մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ
Մելքոնյան Ս.	– «Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ»-ի ղեկավար /համաձայնությամբ/
Գասպարյան Ս.	_ մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչի տեղակալ

Համապատասխան համայնքի ղեկավարը /համաձայնությամբ/

Համապատասխան համայնքապետարանի գյուղատնտեսության գծով մասնագետը /համաձայնությամբ/»:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ